




COVID-19

Միոկարդիտ և պերիկարդիտ

Միոկարդիտը սրտամկանի բորբոքումն է: Պերիկարդիտը սրտապարկի բորբոքումն է:

- Երկու հիվանդություններն էլ առաջանում են վարակի կամ այլ հրահրիչների նկատմամբ մարմնի բնական արձագանքի հետևանքով: Տարածված պատճառների մեջ են մտնում բակտերիական և վիրուսային վարակները և առողջական այնպիսի խնդիրները, ինչպիսիք են աուտոիմունային հիվանդությունները: COVID-19-ի վարակը և պատվաստումները կարող են առաջացնել սրտի այս խնդիրները:
- Ախտանիշները ներառում են՝ կրծքի ցավ, հևոց, սրտի արագ, անկանոն կամ ուժեղ բաբախ ունենալու զգացողություն, թուլության կամ հոգնածության զգացողություն և փորժակի կորուստ:

Միոկարդիտը, պերիկարդիտը և COVID-19-ի դեմ պատվաստանյութերը



- Մարդկանց մոտ հազվադեպ առաջանում է միոկարդիտ կամ պերիկարդիտ COVID-19-ի դեմ Pfizer, Moderna կամ Novavax պատվաստանյութերով պատվաստվելուց հետո:
- Ախտանիշները սովորաբար հայտնվում են պատվաստումից մի քանի օր հետո: Մարդկանց մեծ մասի վիճակը արագ բարելավվում է դեղերի և հանգստի միջոցով:
- Այս հիվանդություններն ունենալու ամենամեծ հավանականությունն ունեն արական սեռի պատանիներն ու երիտասարդները: 2-րդ դեղաչափը 1-ինից 8 շաբաթ հետո ստանալը նվազեցնում է դրանց վտանգը:

Սրտի համար վտանգներն ավելի փոքր են COVID-19-ի դեմ պատվաստվելու, քան COVID-19-ով վարակվելու դեպքում:

- Եվ COVID-19-ի դեմ պատվաստանյութերը, և COVID-19-ով վարակվելը մեծացնում են միոկարդիտի և պերիկարդիտի առաջացման վտանգը: Սակայն COVID-19-ով վարակվելը կարող է նաև մեծացնել սրտի այլ խնդիրների առաջացման վտանգը, ինչպես օրինակ՝ սուր կորոնար համախտանիշի, սրտի կաթվածի (սրտամկանի ինֆարկտ), սրտի կանգի և սրտի անկանոն բաբախի (առիթմիա):
- Հավելյալ տեղեկությունների համար խոսեք ձեր բժշկի հետ կամ այցելեք CDC-ի կայքէջ՝ [Միոկարդիտ և պերիկարդ՝ COVID-19-ի դեմ իՌՆԹ պատվաստանյութը ստանալուց հետո:](#)

